ՀՀ ԵՎ ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայկանուշ Պավելի Չոբանյան
ՀՀ միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ,
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Հոդվածում ներկայացվում է 2012թ-ից հետո ՌԴ-ում միգրացիոն քաղաքականության փոփոխությունների և 2014թ-ին ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության ազդեցությունը Հայաստանի և Ռուսաստանի միջև միգրացիոն տեղաշարժերի վրա:

Քանակական և որակական վերլուծության համար հիմնական աղբյուր են հանդիսացել 2013թ.[1], 2015թ.[2] և 2017թ-ին[3] իրականացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները, ինչը հնարավորություն է տալիս գնահատել միգրացիոն բնութագրիչների դինամիկ փոփոխությունները:

Ռուսաստանը որպես Հայաստանից միգրատներին ընդունող հիմնական երկիր.

Հայաստանից էմիգրացիոն հոսքերը հիմնականում աշխատանքային նպատակով են: Եթե 2007-2012թթ. աշխատանքի նպատակով կատարված մեկնումները կազմել են Հայաստանի ընդհանուր արտահոսքի 80%-ը (434.8 հազար մեկնումից 348.4 հազարը), 2013-2015թթ. աշխատելու նպատակով մեկնումների մասնաբաժինը արդեն կազմել է 84,7% (598.2 հազար մեկնումից աշխատելու նպատակ են հետապնդել 506.6 հազարը):

2016-2017թթ-ին նույնպես ՀՀ արտաքին միգրացիոն գործընթացների կարևորագույն մասը շարունակել է մնալ աշխատանքային միգրացիան: Այդ շրջանում միգրացիոն ուղևորությունների շուրջ 86%-ը, կատարվել է աշխատանքային

---

[1] «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով 2007-2012թթ» // Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Սոցիալ-ժողովրդագրական հետազոտությունների կենտրոն, Պետպատվերով գիտա-հետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Երևան, 2013 թ., հասանելի է՝ http://science.rau.am/rus/7/3592.

[2] «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով 2013-2015թթ» // Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Սոցիալ-ժողովրդագրական հետազոտությունների կենտրոն, Պետպատվերով գիտա-հետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Երևան, 2016 թ., հասանելի է՝ http://science.rau.am/rus/7/3557.

[3] «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով 2015-2017թթ» // Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Սոցիալ-ժողովրդագրական հետազոտությունների կենտրոն, Պետպատվերով գիտա-հետազոտական թեմայի գիտական հաշվետվություն, Երևան, 2016թ., հասանելի է՝ http://smsmta.am/upload/Survey_executive_summary_EN.pdf.

միգրանտների և նրանց ուղեկցող տ/տ-ների անդամների կողմից (485 հազար՝ մեկնումներ, 380 հազար՝ ժամանումներ):

Արտերկրում գտնվող Հայաստանցի էմիգրանտների թվում աշխատանքային տարիքի անձանց մասնաբաժինը կազմել է 91%, իսկ տղամարդկանց մասնաբաժինը՝ 83%: Հայաստանցի միգրանտների 52,2%-ը գտնվում է առավել ակտիվ աշխատանքային տարիքում (այսինքն, 25-44 տարեկան), ինչը ևս փաստում է, որ Հայաստանից էմիգրացիոն հոսքերը հիմնականում ունեն աշխատանքային բնույթ:

Հաջորդ հանգամանքը, որ անհրաժեշտ է արձանագրել, այն է, որ Հայաստանից աշխատանքային միգրացիոն հոսքերի հիմնական նպատակակետ երկիրը Ռուսաստանն է: 2013-2015թթ. թե մեկնումների և թե ժամանումների առումներով ընդգծվել է ՌԴ-ի Հայաստանից միգրանտներ ընդունող հիմնական երկիր լինելու հանգամանքը: Այսպես, ՌԴ մեկնումների մասնաբաժինը, 2013թ. 89,4%-ից բարձրացել է մինչև 94,6%-ը 2015թ-ին:

Դեպի ՌԴ աշխատանքային միգրացիան ունի սեզոնային բնույթ, և սեզոնային միգրանտները Ռուսաստանում միջինում անց են կացնում մոտ 8-9 ամիս: Ռուսաստանում են բնակվում ՀՀ եկարաժամկետ միգրանտների մոտ 70-75%, իսկ կարճաժամկետ, սեզոնային աշխատանքային միգրանտների 96%-ը:

Աշխատանքային միգրանտների զբաղվածության հիմնական ոլորտները մնում են շինարարությունը՝ 66.9% և գյուղատնտեսությունը՝ 18.8%:

Էմիգրացիայի մեծ ծավալների արդյունքում դեպի Հայաստան դրամական փոխանցումները, ըստ Համաշխարհային Բանկի տվյալների (2013), կազմել են Հայաստանի ՀՆԱ-ի 20%-ը[1]: Ինչպես ցույց են տալիս ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած տվյալները, դրանց շուրջ 80%-ը Ռուսաստանից է: Վերջին 3-4 տարիներին, պայմանավորված Ռուսաստանի տնտեսական դժվարություններով և ռուսական ռուբլու արժեզրկմամբ, Հայաստան կատարված դրամական փոխանցումների ծավալները նվազել են և 2015թ. կազմել են ՀՆԱ-ի 14,1%-ը (2015, Համաշխարհային Բանկ), իսկ 2016թ-ին՝ 13% կամ 1,382 մլն դոլար[2] (2016, Համաշխարհային Բանկ):

ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունները. 2012թ-ից Ռուսաստանը մի շարք փոփոխություններ նախաձեռնեց իր միգրացիոն քաղաքականության մեջ: 2014թ. հունվարից ուժի մեջ մտան «ՌԴ մուտքի և ելքի մասին» և «ՌԴ-ում օտարերկրացիների կարգավիճակի մասին» օրենքներում

[1] WB, 2015, Personal remittances, received (% of GDP), http://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.DT.GD.ZS?end=2015&locations=AM&start=1995&year_high_desc=false.

[2] WB, 2016, Personal remittances, received (current US$), https://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.CD.DT?contextual=min&end=2016&locations=AM&start=1995&view=chart .

կատարված փոփոխությունները[1], որոնք անակնկալի բերեցին ԱՊՀ տարածքից Ռուսաստան մեկնող միգրանտների ստվար բազմությանը: 2013թ. Ռուսաստանի միգրացիոն օրենսդրության և կիրառվող պրակտիկայում տեղի ունեցած խստացումների հետևանքով բազմաթիվ օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ սկսեց կիրառվել ՌԴ մուտքի արգելք՝ մինչև 10 տարի ժամկետով: ՌԴ միգրացիոն օրենսդրության խստացումներով պայմանավորված՝ բազմաթիվ ՀՀ քաղաքացիների նկատմամբ նույնպես սահմանվեց ՌԴ մուտքի արգելք: Նրանք ովքեր դուրս են եկել ՌԴ տարածքից (հիմնականում գտնվում են ՀՀ-ում) չեն կարողանում հետ վերադառնալ Ռուսաստան:

Արգելքի պատճառ են հանդիսանում ոչ միայն ՌԴ միգրացիոն կարգի խախտումները, այլ նաև վարչական իրավախախտումները: ՌԴ մուտքի արգելքը կարող է լինել ինչպես ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության կողմից, այնպես էլ այլ գերատեսչությունների կողմից:

ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության (ՄՊԾ) և ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության (ԴՄԾ) միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ՄՊԾ-ն հավաքագրում է ՌԴ մուտքի արգելքը վերանայելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիների դիմումները՝ կից փաստաթղթերի հետ միասին և փոխանցում դրանք Ռուսաստանի ԴՄԾ: Վերջինս դրանք քննարկելով որոշում է կայացնում մուտքի արգելքը բացելու կամ որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ: Նշված աշխատանքները սկսել են տարվել 2014թ. հունիսից: Վերոհիշյալ աշխատանքներին զուգահեռ, 2015թ. ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների խնդիրը ներառվեց միգրացիոն հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի 2016թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում կայացած նիստի օրակարգում: Միգրացիոն ծառայությունը մինչև նիստը, առաջարկել էր ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների շրջանակի ընդլայնման նպատակով քննության առնել «ՌԴ-ից ելքի և ՌԴ մուտքի կարգի մասին» 1996թ. հուլիսի 18-ի թիվ 114 դաշնային օրենքի 26-րդ հոդվածով խախտում թույլ տված ՀՀ քաղաքացիներին «սև ցուցակից» հանելու հարցը: Ռուսական կողմը նիստի ընթացքում տեղեկացրել էր, որ ընդառաջ գնալով հայկական կողմի խնդրանքին՝ արդեն իսկ հրահանգել ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության տարածքային ստորաբաժանումներին՝ արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների ցուցակից հանել այն անձանց, ովքեր խախտումներ են թույլ տվել օրենքի վերը նշված հոդվածում բերված կետերով: Ռուսական կողմի տվյալների համաձայն սրա արդյունքում 22000 ՀՀ քաղաքացիների համար ՌԴ մուտքի արգելքը հանվել է[2]:

---

[1] Օրենքներով սահմանված ամենաազդեցիկ փոփոխությունն այն է, որ այսուհետ ՌԴ մուտք գործող միգրանտներն իրավունք ունեն ՌԴ-ում գտնվել ոչ ավել քան 90 օր 180 օրերի ընթացքում:

[2] ՌԴ մուտքի արգելքի վերանայում, http://smsmta.am/?menu_id=172:

Այնուամենայնիվ, իրականացված հետազոտությունները՝ ՀՀ-ից մեկնումների և ժամանումների տարբերության և դրամական փոխանցումների ծավալների փոփոխության վերաբերյալ, ցույց են տալիս, որ ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունները և մասնավորապես ՌԴ մուտքի արգելքը էական ազդեցություն չեն ունեցել ՀՀ-ից միգրացիոն հոսքերի վրա[1]:

Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրա

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) ստեղծման պայմանագրին (2014թ. մայիսի 29) Հայաստանը միացել է 2014թ. հոկտեմբերի 9-ին, որն իրավական ուժ է ստացել 2015թ. հունվարի 2-ից: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը միգրացիոն ոլորտում համագործակցության խորացման նոր հնարավորություններ բացեց Հայաստանի համար: ԵԱՏՄ համաձայնագիրն ուղղված է անդամ պետություն-ների տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի, ինչպես նաև աշխատուժի միասնական շուկայի ձևավորմանը: Այսօր արդեն ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտներն իրավունք են ստացել աշխատել և գտնվել անդամ պետություններում առանց նրանց կողմից աշխատանքի ազգային շուկայի պաշտպանության նպատակով կիրառվող պահանջների կատարման՝ միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Այսինքն, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (Բելոռուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) աշխատելու համար՝ ՀՀ քաղաքացիներից չի պահանջվում ունենալ թույլտվության բնույթի որևէ փաստաթուղթ, բավարար է ունենալ գործատուի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագիր[2] և միգրացիոն թերթիկում նշել նպատակը՝ «աշխատանք»:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո ՌԴ տարածքում աշխատող ՀՀ քաղաքացիների թիվն աճել է: Այսպես՝ 2014թ-ի 124.500-ի դիմաց 2017թ-ին ՌԴ-ում աշխատող ՀՀ քաղաքացիների թիվը գրեթե կրկնապատկվել է հասնելով՝ 232.247-ի[3]:

---

[1] **Պողոսյան Ա.** ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը և ՀՀ միգրացիոն քաղաքականության արձագանքը, Երևան, 2015:

[2] Նվազում է արձանագրվել Բելառուսում՝ համապատասխանաբար 383 և 163, իսկ Ղազախստանում երկու տարիների առաջին կիսամյակների տվյալներով՝ 911 և 67: Հայաստանում աշխատող ԵԱՏՄ երկրների քաղաքացիների վիճակագրությունը 2015թ և 2016թ առաջին կիսամյակների տվյալներով հետևյալն է՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ՝ 120, Բելառուս՝ 13, Ղազախստան՝ 19, Ղրղզստան՝ 4:

[3] Աշխատանքի նպատակով ԵԱՏՄ անդամ պետություն մուտք գործած քաղաքացիների թիվը, http://smsmta.am/upload/20180603_EATM_ARM.pdf :

Պետք է նկատի ունենալ սակայն, որ նման աճի պատճառը ոչ միայն ՀՀ քաղաքացի միգրանտների թվի ավելացումն է, այլև նրանց դուրս գալը ստվերից և օրինական դաշտում աշխատելը:

Կասկածից վեր է, որ վարձու աշխատողների արտերկրյա զբաղվածության ստվերայնության մակարդակի նման զգալի նվազումը պայմանավորված է բացառապես 2015թ. ներդրված ԵԱՏՄ երկրների քաղաքացիների՝ այլ ԵԱՏՄ երկրներում աշխատանքային գործունեություն իրականացնելու կանոնակարգի պահանջներով՝ այն է, որ դրա անհրաժեշտ և բավարար պայմանը գործատուի հետ պաշտոնական գրավոր աշխատանքային պայմանագրի առկայությունն է:

Դա են փաստում նաև հետազոտական տվյալները, որ Հայաստան վերադարձող միգրանտների թվում 2013թ. համեմատ 2015թ-ին ավելի քան կրկնակի մեծացել է ՌԴ-ում «աշխատանքի իրավունք» իրավական կարգավիճակով բնակվածների բաժինը (17%-ից, մինչև՝ 35,8%-ի) պայմանավորված ՌԴ միգրացիոն օրենսդրությունում կատարված փոփոխություններով: Այն հնարավորություն տվեց ԵԱՏՄ անդամ երկրում Միության անդամ այլ երկրների քաղաքացիների գտնվելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու նոր պայմանների գործարկում ու դրանով պայմանավորված մեր միգրանտների արտերկրում (նախ և առաջ ՌԴ-ում) բնակվելու ու աշխատելու պայմանների էապես բարելավում:

Այնուամենայնիվ, կարելի է նշել, որ անհրաժեշտ է աշխատանք տանել նաև Միության անդամ երկրների տարածքում ՀՀ աշխատուժի ազատ տեղաշարժի կարգավորման, օրինական միգրացիայի ընդլայնման և անօրինական միգրացիայի առաջացման ռիսկերի ու սպառնալիքների կանխարգելման ուղղությամբ:

2015թ-ից սկսած կազմակերպված տեղեկատվական արշավները հիմնականում ուղղվել են «Եվրասիական տնտեսական միության» մասին աշխատանքային միգրացիայի վերաբերյալ պայմանագրի դրույթների պարզաբանմանը: ՀՀ-ում միգրացիոն իրավիճակի վերջին հետազոտության տվյալները փաստում են, որ ԵԱՏՄ երկրներ մուտք գործելու, հաշվառվելու, աշխատելու վերաբերյալ նոր կարգին ծանոթ է ՀՀ չափահաս բնակչության մոտ 30%-ը, ընդ որում տեղեկացվածության մակարդակն առավել բարձր է երևանաբնակների, և համեմատաբար ցածր՝ գյուղաբնակների շրջանում: Այդունհանդերձ, նույն հետազոտության տվյալների համաձայն պարզվում է, որ ԵԱՏՄ անդամ երկրներում գտնվելու, բնակվելու և աշխատելու կարգի դրույթների խախտումներ ունեցածների տեսակարար կշիռը կազմել է ամբողջի ընդամենը 0.1%-ը:

Այնուամենայնիվ, Ռուսաստանում օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև արտագնա

աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի փաստացի պաշտպանության խնդիրները շարունակում են մնալ օրակարգային:

Ամփոփելով, պետք է նշել, որ ՌԴ շարունակում է մնալ հայ միգրանտների հիմնական նպատակակետ երկիր և ՌԴ-ում միգրացիոն քաղաքականության վերջին փոփոխություններն էական կաշկանդիչ ազդեցություն չունեցան ՀՀ-ից միգրացիոն տեղաշարժերի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ, չնայած ՌԴ տնտեսական վիճակում նկատելի դրական տեղաշարժերի բացակայությանը՝ այս դեպքում այն դրսևորվել է նրանում, որ Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության բերումով էապես բարելավվել են մեր աշխատանքային միգրանտների միության երկրներում, այդ թվում՝ նախ և առաջ ՌԴ-ում, աշխատանքային գործունեություն իրականացնելու պայմանները:

Այն փաստը, որ ԵԱՏՄ-ում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտները իրավունք են ստացել աշխատել և գտնվել անդամ պետություններում միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա, մի կողմից նրանց հնարավորություն է տալիս նրանց օրինական դաշտում աշխատել, իսկ մյուս կողմից էլ, արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը դեռևս մնում է կարևորագույն հիմնախնդիր:

ՀՀ ԵՎ ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայկանուշ Պավելի Չոբանյան
ՀՀ միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ,
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում է 2012թ-ից հետո ՌԴ-ում միգրացիոն քաղաքականության փոփոխությունների և 2014թ-ին ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության ազդեցությունը Հայաստանի և Ռուսաստանի միջև միգրացիոն տեղաշարժերի վրա:

Պետք է նշել, որ ՌԴ շարունակում է մնալ հայ միգրանտների հիմնական նպատակակետ երկիր և ՌԴ-ում միգրացիոն քաղաքականության վերջին փոփոխությունները էական կաշկանդիչ ազդեցություն չունեցան ՀՀ-ից միգրացիոն տեղաշարժերի վրա:

Այն փաստը, որ ԵԱՏՄ-ում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտները իրավունք են ստացել աշխատել և գտնվել անդամ պետություններում միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա, մի կողմից նրանց հնարավորություն է տալիս նրանց օրինական դաշտում աշխատել, իսկ մյուս

կողմից էլ, արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը դեռևս մնում է կարևորագույն հիմնախնդիր:

Հիմնաբառեր. միգրացիա, միգրանտ, մուտք, ելք, միգրացիոն հոսքեր, աշխատանքային պայմանագիր, իրավական դաշտ, միգրացիոն քաղաքականության:

АРМЯНО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ МИГРАЦИИ

Айкануш Павловна Чобанян
Начальник Отдела внешних связей Государственной
миграционной службы РА, соискатель ЕГУ

Аннотация

В статье представлено влияние на миграцию между Арменией и Россией, изменений в миграционной политике России после 2012 года, и вступления Армении в Евразийский экономический союз (ЕАЭС)в 2014 году.

Следует отметить, что Россия остается основной страной назначения для трудовых мигрантов из Армении. Данные обследования относительно сальдо прибытий в Армению и выбытий из Армении, а также изменений объемов денежных переводов показывают, что изменения в российской миграционной политике и, в частности, запрет на въезд в РФ не оказали существенного влияния на миграционные потоки из Армении.

Тот факт, что в Евразийском экономическом союзе трудовые мигранты граждане РА получили право на пребывание и работу на територрии государств-членов Союза только на основании трудового договора, с одной стороны, позволяет им работать в правовом поле, с другой стороны, остается одним из самых важных вопросов защиты прав и интересов трудящихся-мигрантов.

Ключевые слова: миграция, мигрант, въезд, выезд, миграционные потоки, трудовой договор, правовое поле, миграционная политика.

ARMENIAN-RUSSIAN RELATIONS IN THE MIGRATION CONTEXT

Haykanush Pavel Chobanyan
Head of the External Relations Division of the RA
State Migration Service, YSU PhD student

Abstract

The paper presents impact on migration between Armenia and Russia after the changes of Russian migration policy since 2012, and Armenia's accession to the Eurasian Economic Union (EAEU) in 2014.

Russia remains the main country of destination for labour migrants from Armenia. Survey data on the net migration of arrivals in Armenia and departures from Armenia, as well as changes of remittances' volume show that recent changes in the Russian migration policy and, in particular, the ban on entry into the Russian Federation had not have a significant impact on migration flows from Armenia.

The fact that the Armenian migrant workers have the right to stay and work in territory of Member States of the Eurasian Economic Union only on the basis of an employment contract, on the one hand, allows them to work in the legal field, on the other hand, it remains one of the most important issues of protection of rights and interests of migrant workers.

Keywords: migration, migrant, entry, departure, migratory flows, employment contract, legal field, migration policy.